# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | անջրանցիկ թիկնոցներ | ARYAN | ARYAN INTERNATIONAL TRADE CO LIMITED | Թիկնոց–ուսնոց: Անջրանցիկ դեղնականաչավուն կամ գունաքողարկված 13C9-KB-ПлПУ արտիկուլի գործվածքից, 1մ2 մակերասային խտությունը՝ 187գր, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Ձևածքն ուղիղ ուրվագծով: Թիկնոցը կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից և գլխանոցից: Լանջափեշերը կոճկվում են 5 հատ 20մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա՝ կողքերից ներկարված թեք միջանցիկ բացվածքներ, որոնք ներսից կոճկվում են երկուական 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով: Բացվածքների ներսից նույն լայնությամբ կարված գոտիներ, ձեռքերի համար: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կախիչ: Մեջքը` դեպի դուրս բացվող վերին կարով, թիկունքի մասը նույն կտորից երկտակ կարված: Թևքերը երկկարանի ներկարված, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գլխանոցը` հանվող, որը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 4 օղակներով և թիկնոցին կարված 4 հատ 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակներով: Գլխանոցի վրա կարված են նաև 3 հատ 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներ, սահմանված ձևի: Թիկնոցի կոճակները` պատրաստված է ջերմադիմացկուն /չհալվող/ նյութից, 4 կարանցքներով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող: Արտաքին տեսքը` համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/3 մինչև 58/5 չափս-հասակի: Ապրանքի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակը, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ` 1 հատ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | |